ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/83/2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 04 հունիսի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող) Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի հունիսի 4-ին, քննելով ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու անդամ Անահիտ Զավենի Խաչատրյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2024 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու փաստի առթիվ հարուցված ՎԻՎ/83/2024 վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, Էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով, պարզել է, որ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու անդամ Անահիտ Զավենի Խաչատրյանի կողմից 2024 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի մարտի 15-ի թիվ 01/841/-3-2024 գրությամբ Անահիտ Զավենի Խաչատրյանին ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո

30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել համապատասխան Հայտարարագիրը: Նույն ծանուցմամբ հայտնվել է, որ նշված ժամկետի ընթացքում Հայտարարագիրը չներկայացնելու դեպքում ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը, ժամը՝ 10:00-ին հրավիրվում է Հանձնաժողով՝ իր մասնակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար: Նշված ծանուցումը Անահիտ Զավենի Խաչատրյանի կողմից ստացվել է 2024 թվականի մարտի 19-ին, սակայն, ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Հայտարարագիրը չի ներկայացվել:

1.3 2024 թվականի ապրիլի 19-ին պատշաճ ծանուցված Անահիտ Զավենի Խաչատրյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/94/24 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի մայիսի 7-ի թիվ 01/1432-2024 գրությամբ Անահիտ Զավենի Խաչատրյանին է ուղարկվել 2024 թվականի մայիսի 20-ին՝ ժամը՝ 14:15-ին նշանակված, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր: ՎԻՎ/83/2024-1 գործով նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը և ժամին, այն է՝ 2024 թվականի մայիսի 20-ին, ժամը՝ 14:15-ի դրությամբ Հանձնաժողովում առկա չէր Անահիտ Զավենի Խաչատրյանի կողմից գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված լինելը հավաստող ապացույց (փոստային ծանուցագիրը ստացած լինելը հավաստող փոստային հետադարձ առաքանին): Ուստիև, Հանձնաժողովն իրավասու չէր թիվ ՎԻՎ/83/2024 գործի քննությունն իրականացնել վարույթի մասնակցի բացակայությամբ՝ հաշվի առնելով Օրենսգրքի 267-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումն առ այն, որ գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին: Նշանակված օրը և ժամին Անահիտ Զավենի Խաչատրյանի բացակայությամբ, թիվ ՎԻՎ/83/2024 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի կապակցությամբ անցկացվել է Հանձնաժողովի նիստ: Հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 20-ի թիվ ՎԻՎ/83/2024-1 որոշմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կասեցվել է՝ մինչև կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալը:

1.5 Հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 23-ի թիվ 01/1686-2024 գրությամբ Անահիտ Զավենի Խաչատրյանին է ուղարկվել 2024 թվականի հունիսի 4-ին, ժամը՝ 16:15-ին նշանակված, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր: Անահիտ Զավենի Խաչատրյանը ծանուցումը ստացել է 27.05.2024 թվականին (հիմք՝ AL0122841434AM փոստային առաքանի):

1.6 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Անահիտ Զավենի Խաչատրյանի բացակայությամբ 2024 թվականի հունիսի 4-ին՝ ժամը 16:15-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն: Անահիտ Զավենի Խաչատրյանի կողմից միջնորդություններ չեն ներկայացվել:

II.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/83/2024 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում, որ ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու անդամ Անահիտ Զավենի Խաչատրյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2024 թվականի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

III. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

3.1 ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու անդամ Անահիտ Զավենի Խաչատրյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսացել է գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

3.2 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:

3.3 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված ***հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը*** առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

3.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

3.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

3.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

3.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

3.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

3.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

3.10 Օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող, ինչպես նաև 33-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող որևէ հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2024 թվականի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Անահիտ Զավենի Խաչատրյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ ***200 000 ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Անահիտ Զավենի Խաչատրյանին սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ